

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային
հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին նիստի անդամները

Օրակարգում՝


1. 2016թ. ընթացքում հանձնաժողովի կատարած աշխատանքների և 2017թ. աշխատանքային ծրագրի քննարկում:

/Ձեկ՝ Լ.Մուրադյան/

Ողջունելով ներկաներին, տիկին Մուրադյանը նշեց, որ 2016 թվականը հայտարարված էր ՀՀ-ում հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների տարի, որը նոր խթան էր հաշմանդամություն ունեցող անձանց կենսագործունեության բոլոր ոլորտներում հավասար պայմանների ապահովման և նրանց իրավունքների իրացմանն ուղղված միջոցառումների իրականացման ուղղությամբ: Տիկին Մուրադյանը նշեց, որ հանձնաժողովը ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2006 թվականին իրականացրել է համագործակցված աշխատանք, բայց անելիքները դեռևս շատ են հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայր ստեղծելու, նրանց զբաղվածության խնդիրների լուծման, ինչպես նաև նրանց սոցիալական ներառման ուղղությամբ: Տիկին Մուրադյանը ավելացրեց, որ ՀՀ կառավարության 2017թ. հունվարի 17-ի նիստով հաստատվել է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանն ուղղված 2017-2021 թթ. համալիր ծրագիրը, որը պետք է դառնա առաջիկա տարիների սոցիալական ներառման քաղաքականության ուղենիշը:

Նիստի վերջում ներկայացվեցին վերջին երկու ամիսների ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային ՀԿ-ների կողմից իրականացված աշխատանքները, արձանագրված հաջողություններն ու առկա խոչընդոտները:

Հանձնաժողովի նախագահ՝



Լ.Մուրադյան

Արձանագրող՝ Հ. Հարությունյան